

Այլ ևս հրապարակաւ շնորհակալութիւն կրմա-
տուցանենք Ազնուուհւոյ պրի տիկնոջ Եղիսաբէթի
Վաճկաճանց, որ Դպրոցիս համար իւր ծախքովն
շինեց Դպրոցիս հանդէպ մի փայտաշէն տուն ար-
ժողութեամբ 1000 ուր. արծ. ուր որ այժմ բը-
նակվում են Դպրոցիս վերակացուն և պահապա-
նը :

Ի վերջոյ առ ի սրտէ շնորհակալութիւն ենք մա-
տուցանում և շեղ Մեծապատիւ հանդիսականք,
որ Ձեր քաղցր ուշադրութիւնը դարձնելով դէպ ի
Ձեր այս ազգային Դպրոցը, այսօր շնորհ ունեցաք
այս տեղ, սորա երրորդ Տարեդարձի մտից և ծա-
խուց արդեանց հաշիւը լսելու : Իսկ միւս մասը
այն է ուսումնական *) հաշիւը Դպրոցիս կրկարդայ
այժմ մեր յարգելի պաշտօնակից Հոգաբարձու պ-
րժիշկ Անանիա Սուլթան—Շահը: Մեր խօսքը մի-
այն այսքան :

Ասացիք ՝ Գաբաբայո՛ւ Դպրոցիս և Գանձապետ
Յովնանէն և Վրոչուքէ գիւղեանց
Գաբաբայո՛ւ և Սիւրբայէ և Վարանախաղեանց
Օգնական Տեւոյի Եսայի և Եսայի
Կաճկաճեանց
Տեո՛ւն և Ենանիա Սուլթան Շահ.

28ին Նոյեմբերի 1874 --ի
Ի Ղարբ:

ՍՈՒՏ ՓՐԿԻՉ ԵՒ ԹՇՈՒՍՈՒ ՓՐԿԵԱԼԻՔ.

Մինչգեւ Լայկազեան ցաւալի ազգն հեռատե-
տութեան ազատ զաղափարներով՝ իւր ազգութեան
քաղաքականութեան և կրօնական աշխարհի հօ-
րիզօնը պայծառացնելու դիտաւորութեամբ ու-
սումնարաններ կառուցանելով՝ քաղաքականու-
թեան և կրօնի թշնամի և արբանեակ տգիտու-
թիւնն և անբարոյականութիւնն հալածելով՝ լու-
սաւորեալ և բարեբարոյ ազգաց անուանց ցան-
կումն տեղ բռնել կրճիւնի, զոր և գտած իսկ է,
ազգութեան զաղափարին հակապատկեր չարաճ-
ճի ոմն ի հանդէս կելանէ:

Վասն զի անբարոյական ոմն Աբրահամ Տէր
Երեմեան Զալալեանց Վարաբաղցի **) սուտ բը-
ժշկութեան արհեստիւ ի Բակտրիացիս պանդի-
տելով՝ ազգային համբաւոյն ստուերարկ գործոց
ձեռնամխած է: Ըստ որում տեղոյն երեսնանձնեայ
ինն գերզատանի, իւր բնաւոր խաբեբայական ճար-

տարմտութեամբ՝ նոցա թշուառութեանը զինքն-
ցաւակից հանդիսացնելով՝ իւրեանց հայրենեաց
շնորհն անձնաւորապէս վայելել կ'առաջադրէ-
բայց իւ կ'պատասխանեն թշուառականքն. ո՞վ
խաբեբայական համոզման և ձեռնարկութեան.
միթէ՞ Զալալեանց գերհոգման և ձեռնարկութեան.
էձեզ պատասխան կրնդունին. ունիմ' ես սեպհա-
կան գիւղօրայք, որոց միոյ մէջ՝ բացի ճանա-
պարհական ձախքն ըստանձնելուց, անհարկ բը-
նակութիւն կտամ՝ ձեզ, ամենայն պիտոյքներդ
բաւականապէս հոգալով, անհոգ եղէք այդ մտա-
ծութենէ:

Կրկնակի կ'պարտաւորին ողորմելիքը այս աւե-
տաբեր հրեշտակի խոստմանն զիջանելոյ. նախ՝ զի
իւրեանց ցանկալի հայրենեաց տեսութեան իրձը
և հայրենեաց ազատութիւնն ի ներքուստ կրմդէր
և կձմէր Լայաստանի թշուառ զաւակաց սիրտն,
երկրորդ՝ մօտալուստ սովու կենսազրաւ վտանգը
կապտնայր նոցա՝ մահ վերահաս. ահա՛ այս եր-
կու յուսալի պատճառներէ ստիպուած՝ կ'կաճա-
ունն իւրեանց զոյք և կ'պուճաճին, որոց զինն ճա-
նապարհի կողոպտման երկիւղինց հարկադրուած
իւրեանց խաբեբայ փրկչին ի պահեստ կտան, և
այս սնտի յոյսերովն զուարճացած կճանապար-
հորդեն մինչև ի՛ նօր ճուղայ. ուր տեղոյ աղքա-
տաց Գանձանակի հոգաբարձութեան անդամոց միջ-
նորդութեամբ կապակցական զիր կտան միմեանց
սուտ փրկչին և թշուառ փրկեալքն:

Գեղեցիկ յոյս. եթէ հարցուէր նոցա, ո՞ր եր-
թայք թշուառք զուարթադէմ պատասխանի պի-
տի ընգունէին ի խորոց սրտից, «ի Լայաստան, ի
Լայաստան, յանուշ գրկարանն, ի բնագաւառն
Լայրենեացս», տխրաբիթ պատասխան, ըստ ո-
րում իւրեանց առօրեայ սրտից ուրախութեանց
հետ մահն աներևութապէս կ'հետամտէ նոցա:
Քանզի երբ կիջեանին Քեաշան, և վարձաւորներ
կրճեն մինչ ի Վաւրէթ, թէպէտ մասնաւորապէս
ներգործած ցրտոյն սաստկութենն, բայց հայրենեաց
տեսութեան սէրը կ'գորանար յաղճել ցրտոյ եր-
կիւղին. բայց ո՞վ զժողդութեանց, զի ոչ իրակա-
նացաւ այս սէրն բողբոխին համար, քանզի քանի
ինչ մղոն ճանապարհ հատանելէն ետքը, ցաւալի
մահուամբ կորուսին իւրեանց ընկերութեան ան-
գամոց մինը. յիրաւի ցաւալի, զի առանց վերջին
թօշակի և քահանայական թաղման յանձնեց իւր
մահականացուն բացօթեայ ցուրտ Պարսկական երկ-
րի ծոցին, և քանի ինչ մղոն ևս ճանապարհ հա-
տանելով երկուքն ևս նոյն դրութեամբ աւանդե-
ցան հողոյն, և որ ցաւալին է զզորորոքն կենդան-
նոյն կորուսին, քանզի մղորեալ ի ճանապար-
հին անհետացաւ, ըստ որում սովու և ցրտոյ սաստ-
կութիւնն յախշտակած էր նոցա ընթացից զօրու-
թիւնն, որում վարձաւորը չեն կամեցած սպասել
քանզի այն մղորեալն վարձած էր զուղտապան-
ներն. ցաւ ցաւոց վերայ, և անբախտութիւն իշ-
խան նոցա. ըստ որում մինչգեւ մի մղոն և եթ

(*) Ուսումնական տեղեկագիրը յաջորդ Քերթով ունիմք
հրատարակելը Ծ. Խմբ.

(**) Այս ազգանունն ճշմարտի չգիտեմք մեր թէ իւր իսկականն
է, այլ իւր պնդիկ թշուառաց մօտն զոնուած խաբեբայ նամակ-
ներն, եւ նոյն իսկ թշուառն այսպէս պատմեցին մեզ:

կմնար Զեանկեան հասնելու, սուտ ազգասերն և փրկիչ կ'առաջանայ քաղաքն կարաւանոց վարձելու. այլ զարմանալի՜ խաբեբայութիւն, ողորմելիքն իջեանելով քաղաքին մէջ՝ ցրտոյն սաստկութեամբն և սովոյն բռնութեամբն մահուան զոհուելու կէտին վերայ էին, և փրկիչն աներեւոյթ. թերևս ընթերցողք պիտի հարցնեն՝ վասն էր հաց չեն գներ, որպէս զի կեանքն շահին. բայց որով դրամով, — սակայն ինչպէս վերը յիշեցիրք, իւրեանց դրամներն ապահոված էին սուտ փրկիչին խաբէութեան գանձարանումն. վերջապէս մինչդեռ սորա այս դառն դրութեան մէջ կտառապէին, կարծես թէ իբր երկնային հրեշտակ, քաղաքին սակաւաթիւ վաճառական Հայ երիտասարդներէն մին՝ անցիցն վարձաւորէն տեղեկանալով թշուառներն այցելել փութացաւ, զոր անմիջապէս յայտնելով ազգային եղբարցը՝ կարևոր ուտելիքք հաստատելով նոցա թակացեալ սիրտն՝ նոցա բերանիցն լսեցին մի բառ միտք իւրեանց սուտ բարերարի ամենայն խաբէութիւններն: Թողով զսոսա այստեղ՝ անցնենք վարձաւորների մտադրութեանը, որոնք պահանջելով կէս ճանապարհի վարձն՝ վերադառնալ մտապիւր էին, թողով իւրեանց բաւական բեռներն նոյն քաղաքին մէջ, զուցէ թէ այս ևս մին խաբեբայական տրամադրութիւն, որ կարծես թէ ճակատագիր է ողորմելիացն, և անչուշտ, վասն զի յետոյ բազում թախանձանօք ազգայնոց տեղոյն դէնպետի և Պարսիկ և Հայ վաճառականաց ստորադրութեամբը հարիւր երեսուն Պարսից թուամանի մուրհակագիր ստանալով նոյն թշուառներէն՝ կրարհաճին բերել յանձնել Գաւրիէոյ Առաջնորդարանիս, և այսպէս կուզեալին այստեղ. ուր ի 25 անցեալ դեկտեմբերի, մինչ տիւն զգիշերն կմերկանայր, վարձաւորներն նոյն մուրհակագիրն ձեռքները բռնած՝ կներկայանան Գերապատիւ Գրիգոր Արքեպիսկոպոսին Առաջնորդի տեղոյս, որ Զանկեանի ազգայնոց առ ինքն տեղեկագիրն կարդալով՝ բերած թշուառներն կպահանջէ վարձաւորներէ, բայց ինչ ցաւալի պատասխան, թէպէտ յիմարական, վասն զի կասեն, թէ մուրհակին մէջ գրած պարտքն չլճարուի՝ Հայերն պիտի յանձնենք դէնպետին, մահմետական կրօնքը բռնաբար ընդունել տալու. այստեղ ազգասեր Առաջնորդն յանդիմանական խօսքերով նոցա յիմարութիւնը դատապարտելով՝ իւր գիշերապահ զինուորներովն Պարսից կարաւանոցէն բռնաբար ետ բերել զնոսա յԱռաջնորդարանն, ուր հայրաբար մխիթարական բանիք նոցա վիշտն սիրտիւնով ուղարկեց տեղոյս ազգային ուսումնարանի սեպհական տունն, անմիջապէս նոցա քանի ինչ աւուր ուտելեաց և վառելեաց պիտոյքն բաւականապէս հոգալով, և երկրորդ աւուր առաւօտուն նորին Արքեպիսկոպոսին իւր նախագահութեամբ ժողով կազմելովն՝ սրտաշարժ բանաստեղծութեամբ ազգային դրամաւոր օժանդակութիւնը խնդրեց այս ողորմելեաց մասին. որոնք ազգասիրաբար և խնդամբ-

տարար ընկալան Արքեպիսկոպոսին հոգեշահ և ազգօգուտ առաջարկութիւնն. « Կնդամտարար, կրքեմ, յարգոյ խմբագիր, ընկալան, վասնզի այս՝ Պարսկաստանի դիտամբ՝ անպտուղ ամն, հարկադրապէս կրթեց ողորմութեան լիաձեռն տրոց հանդիսին մէջ Գաւրիէոսեան սակաւաթիւ ողորմութեան Հայ անդամներն, և յիւրաքի վարժեցան այդ կրթարանին մէջ, քանզի Պարսկաստանէն Ռուսաստան անցաւորաց՝ բացառութեամբ զանազան ծախուց, անցազրոց գինն և եթե եթէ ընդ թրււով արկանենք, կրորդ կարգի մի վաճառականի գումար կզոյանայ, վերջապէս մնացորդն մակարել թողով փորձառուաց, մենք մեր առաջիկայ գործն շարունակենք. ժողովն ընտրելով Արժանապատիւ Յովհաննէս վարդապետն Երեմեանց Հայկաբանութեան վարժապետ և տեսուչ տեղոյս ազգային ուսումնարանի, և տալով նմա ժողովարարական տումար՝ մեկնեցան, իսկ յիշեալ վարդապետն Երեմեանց անձամբ ներկայացեալ ի կրպակրս, և ոմանց ի տան բաղխելով նոցա ողորմութեան դռներն՝ նոյն աւուր մէջ մի հարիւր և քառասուն թուաման Պարսից կանխիկ ժողովեց և դարձաւ յԱռաջնորդարանն, ուր յերրորդում աւուրն եռանձնեայ մասնաժողով որոշուեցաւ ընտրութեամբ գերապատիւ Առաջնորդին և վաճառականապետ պարոն Արզումանայ Նազարբէկեանց, որք են պարոն Յովակիմ Ֆէնարձեանց Կ. Պոլսեցի, պարոն Արքեպիսկոպոսին և պարոն Աստուածատուր Աարաբեկեանց, որք գիտութեամբ նորին Արքեպիսկոպոսին վարձաւորներն գոհացուցանելէն ետքը, գումարի մնացորդն կպահպանեն այնոցիկ ողորմելեացն օրական պիտոյից հոգացողութեան համար: Սոյն այս ողորմելեաց համար ինքնաբերաբար միջնորդութեամբ Գաւրիէոյ Օսմանեան հիւպատոսարանին՝ Առաջնորդարանն ստացաւ տեղւոյս նահանգական կառավարէն ինն խալվար վաթսուն լիտր ցորեան, որ գիտութեամբ մասնաժողովոյն անգամոց հացի հետ փոխանակելով՝ օրական կմանադրուի այնոցիկ կարօտելոց, որոց հինգն յանձնեցան դամբարանին, իսկ մնացեալքն կիսակնդան՝ մահճի կճառայեն, մարդկութեան պատկերի վայելչութեանէ զուրկ, վերջապէս այնպիսի սրտաճկիկ անտարան կներկայացնեն, որ անհասրինների կարգումն կթուրի, եթէ ազգային ոմն տեսնէ և անարատաւք մեկնի նոցա տեսութեանէ: Այս տեղեկագրիս պատուական Արարատ ամսագրոյդ մէջ ասպնջականութիւնն կրկնըդրեմ:

Կապար Կապարէիէեանց:

Ի 5 Փետրվ. 1872.

Ի Դեբեթ,